ղելի, ըռիշտ և կարկամ կարդալի, և շրջայ-
լութիւնն պատուելի՝ ճոխ և ազատ և առատ
համբաւելի։ Յայնպիսի վայրի գոլով երանելիս,
և յայնմ խորագոյն տղմոյն՝ ոչ ի վայր հա-
կէր՝ և ոչ աղտեղանայր գեղեցիկ պատմուճան
ոգւոյ նորա։ և ոչ պղտորէին անբմբռնելի
միտք նորա։ Քանզի յիշէր զնախնիսն՝ և պա-
հէր զազատութիւնն, որպէս պատանին գեղե-
ցիկ ի տան ներքինւոյն։

Եւ զի՞նչ գործառնութիւն նորա՝ դիւա-
նըն ալքունի, մանաւանդ եթէ (թղ. 12ա)
գլխաւորութիւն դիւանին. զի նա միայն էր
հրմուտ լատէնական մատենին և արիական
տառին և փիւնիկեցւոց թըւականին։[1] Եւ
որպէս առնէր. ագահէր, գողանայր, նենկէր,
կաշառ ընդունէր, պատրէր ի կարմրութիւն
ոսկւոյն, կամ ի պայծառութիւն արծաթւոյն,
կամ ի բազմագունակ ականցն և կերպասու-
ցըն՝ մի լիցի.[2] այլ կայր անարատ և անխար-
դախ, բարեխաւս և աւգնական որբոց և այրեաց,
զրկելոց և զրլացելոց, յամաւթ առնելով զայ-

---

1. Փիւնիկեցւոց թւականի եւ յատիւական մատենի մասին միայն սա է գրում։

2. Այս հատուածը նշանաւոր է հեղինակի ժամանակից բարք ու վարքի նկատմամբ, որից պարզ երեւում է, որ նորա օրով էլ արքունիքներում եղել ծառայողներ ազատ չեն եղել ներկայիս արատներից։